



Ֆինանսական հաշվետվություններ

**"Տոր էյ Քնսալթինգ"**

**Փակ Բաժնետիրական ընկերություն**

31 դեկտեմբերի 2020թ.

## Բովանդակություն

	Էջ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	658	1,409
Ոչ նյութական ակտիվներ		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	5	397	209
		<u>1,055</u>	<u>1,618</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	3,182	80
Տրված փոխառություններ	7	650	1,640
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	12,705	8,089
		<u>16,537</u>	<u>9,809</u>
<i>Ընդամենը ակտիվներ</i>		<u>17,592</u>	<u>11,427</u>
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Կանոնադրական կապիտալ	9	50	50
Կուտակված շահույթ		6,889	2,845
		<u>6,939</u>	<u>2,895</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
		-	-
		-	-
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	9,204	7,914
Շահութահարկի գծով պարտավորություն		1,449	618
		<u>10,653</u>	<u>8,532</u>
<i>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</i>		<u>17,592</u>	<u>11,427</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 02 ապրիլի 2021թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն

Գրիգոր Նազարյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է քննարկել այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	11	65,727	56,870
Վաճառքի ինքնարժեք	12	(38,682)	(34,930)
		<u>27,045</u>	<u>21,940</u>
Այլ եկամուտներ	13	981	66
Վարչական ծախսեր	14	(14,404)	(9,055)
Այլ ծախսեր		(200)	-
Գործառնական գործունեությունից շահույթ		<u>13,422</u>	<u>12,951</u>
Ֆինանսական եկամուտներ		473	363
Ֆինանսական ծախսեր		(61)	-
Այլ ֆինանսական հոդվածներ		(51)	-
Շահույթ մինչև հարկերը		<u>13,783</u>	<u>13,314</u>
Շահութահարկի գծով ծախս	15	(2,554)	(2,669)
Զուտ շահույթ		<u>11,229</u>	<u>10,645</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>11,229</u>	<u>10,645</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	50	2,786	2,836
2019թ. տարվա շահույթ	-	10,645	10,645
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	10,645	10,645
Շահաբաժիններ	-	(2,786)	(2,786)
Միջանկյալ շահաբաժիններ	-	(7,800)	(7,800)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	2,845	2,895
2020թ. տարվա շահույթ	-	11,229	11,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	11,229	11,229
Շահաբաժիններ	-	(2,845)	(2,845)
Միջանկյալ շահաբաժիններ	-	(4,340)	(4,340)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	6,889	6,939

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա շահույթ	11,229	10,645
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	971	514
Շահութահարկի գծով ծախս	2,554	2,669
Ֆինանսական եկամուտներ	(473)	(363)
Ֆինանսական ծախսեր	61	-
Փոխարժեքային տարբերությունից վնաս/շահույթ	51	-
Շնորհից եկամուտ	(981)	-
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ</i>	13,412	13,465
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(3,113)	1,006
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	1,290	2,575
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	11,589	17,046
Վճարված տոկոս	(61)	-
Վճարված շահութահարկ	(1,911)	(4,042)
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	9,617	13,004
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(220)	(1,683)
Տրված փոխառություններ, զուտ	990	1,060
Ստացված տոկոս	433	363
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	1,203	(260)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահաբաժիններ	(7,185)	(10,586)
Ստացված շնորհներ	981	-
<i>Ֆինանսական գործունեության համար օգտագործված/ստացված զուտ դրամական միջոցներ</i>	(6,204)	(10,586)
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում/աճ</i>	4,616	2,158
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա</i>	-	-
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում</i>	8,089	5,931
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում</i>	12,705	8,089

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 7-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

"Տոր Էյ Քնսալթինգ" Փակ Բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2015թ. դեկտեմբերի 1-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝ աուդիտորական և հաշվապահական խորհրդատվական ծառայությունները:

Ընկերության բաժնետերերն են.

Անիկ Արարատի Մարտիրոսյան	29 %,
Անի Լևոնի Խաչատրյան	28 %,
Արամ Գևորգի Մաչանյան	28 %,
Աննա Մամվելի Ավետիսյան	10 %,
Հայկ Հակոբի Բաբայան	5 %:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավիթաշեն 4 թղմ 213, բն18:

2020թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 11 մարդ (2019թ.՝ 12 մարդ):

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է ("դրամ"), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ դեկլարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

Միկրոկազմակերպությունների համար ՀՀ օրենսդրության համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում

Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

**3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

**3.1 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	-2 տարի
Արտադրական և տնտեսական գույք	- 5 տարի
Այլ հիմնական միջոցներ	- 5 տարի:

**3.2 Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

**3.3 Վարձակալված ակտիվներ**

Ընկերության վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության, ծախսագրվում են իրականացման պահին:

**3.4 Ֆինանսական գործիքներ**

*Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

*Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում*

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.



- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

#### I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում: Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

#### II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Մեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում:

#### III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

#### IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են

առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

*V. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

*VI. Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

*I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.5 Մեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

**3.6 Շահութահարկ**

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

**3.7 Հասույթի ճանաչում**

Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է աուդիտորական և խորհրդատվական ծառայություններից:

**4. Հիմնական միջոցներ**

Հազար դրամ	Մեքենա սարքավորումներ	Արտադրական և տնտեսական գույք, այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	863	491	1,354
Ավելացում	1,667	17	1,684
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,530	508	3,038
Ավելացում	128	92	220
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,658	600	3,258
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	835	284	1,119
Տարվա ծախս	410	100	510
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,245	384	1,629
Տարվա ծախս	869	102	971
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,114	486	2,600
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,285	124	1,409
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	544	114	658

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն:  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի չշահագործվող հիմնական միջոցներ:

**5. Հետաձգված հարկեր**

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	209	92
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	188	117
Տարեվերջի մնացորդ	397	209

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2020թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Դեբիտորական պարտքի պահուստ	48	(48)	-
Արձակուրդի պահուստ	161	236	397
	<u>209</u>	<u>188</u>	<u>397</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
	-	-	-
	-	-	-
Զուտ արդյունք հետաձգված հարկեր	<u>209</u>	<u>188</u>	<u>397</u>
Ներառյալ՝		2020թ.	2019թ.
Փոխհատուցման/մարման ենթակա ավելի քան 12 ամսվա ընթացքում		397	209
Փոխհատուցման/մարման ենթակա 12 ամսվա ընթացքում		-	-

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2019թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Դեբիտորական պարտքի պահուստ	48	-	48
Արձակուրդի պահուստ	44	117	161
	<u>92</u>	<u>117</u>	<u>209</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
	-	-	-
	-	-	-
Զուտ արդյունք հետաձգված հարկեր	<u>92</u>	<u>117</u>	<u>209</u>

## 6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,110	240
Դեբիտորական պարտքերի գծով պահուստ	-	(240)
	<u>1,110</u>	<u>-</u>
Տրված կանխավճարներ	4	80
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	2,028	-
Այլ դեբիտորական պարտքեր	40	-
	<u>3,182</u>	<u>80</u>

## 7. Տրված փոխառություններ

Փոխառության մնացորդը ներկայացնում է Մերրի Խաչատրյանին տրամադրված 650 հազ. դրամ անտոկոս փոխառությունը: Փոխառության մարման ժամկետ է սահմանված 2021թ. օգոստոսի 31-ը:

**8. Դրամական միջոցներ**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկդ	502	8
Մնացորդներ բանկերում	9,203	5,081
Ավանդ բանկերում	3,000	3,000
	<u>12,705</u>	<u>8,089</u>

**9. Մեփական Կապիտալ**

**9.1 Կանոնադրական կապիտալ**

Ընկերության կանոնադրական կապիտալն, որը կազմում է 50 հազ. դրամ, որը բաժանված է 100 բաժնեմասերի: Կանոնադրական կապիտալն ամբողջությամբ վճարված է և պատկանում է բաժնետերերին: Մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 500 դրամ:

**9.2 Շահաբաժիններ**

Ընկերությունը 2019թ. բաժնետերերին վճարել է 2,786 հազ. դրամ շահաբաժին, 7,800 հազ. դրամ միջանկյալ շահաբաժին, 2020թ.՝ 2,845 հազ. դրամ շահաբաժին, 4,340 հազ. դրամ միջանկյալ շահաբաժին:

**10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	110	10
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	840	1,511
Ստացված կանխավճարներ	6,050	5,589
Ընթացիկ պահուստներ	2,204	804
	<u>9,204</u>	<u>7,914</u>

Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

**11. Հասույթ**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աուդիտորական ծառայությունների մատուցումից	50,194	46,903
Հարակից ծառայությունների մատուցումից	250	1,567
Խորհրդատվական ծառայությունների մատուցումից	12,367	8,400
Ներքին աուդիտի ծառայությունների մատուցումից	2,916	-
	<u>65,727</u>	<u>56,870</u>

**12. Վաճառքի ինքնարժեք**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	31,858	24,471
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր	875	514
Վարձակալության ծախսեր	5,067	3,569
Խորհրդատվական ծախսեր	210	3,700
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	672	2,676
	<u>38,682</u>	<u>34,930</u>

**13. Շնորհից եկամուտ**

Շնորհից եկամուտը իրենից ներկայացնում է 2020թ. ՀՀ պետական բյուջեից ստացված՝ կորոնավիրուսի հակազդման ծրագրերով ստացված գումարները՝ 981 հազ. դրամ:

**14. Վարչական ծախսեր**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	12,071	7,450
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	58	100
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	77	157
Բանկային ծառայություն. ծախսեր	104	125
Այլ ծախսեր	2,094	1,223
	<u>14,404</u>	<u>9,055</u>

**15. Շահութահարկի գծով ծախս**

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,742	2,786
Հետաձգված հարկ	(188)	(117)
	<u>2,554</u>	<u>2,669</u>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2019թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	Արդյունավե տ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/վնաս մինչև հարկումը	13,783		13,314	
Շահութահարկ՝ 18% դրույք. (2019թ.՝ 20%)	2,480	18.00	2,663	20.00
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	74	0.53	6	0.05
Շահութահարկի գծով ծախս	<u>2,554</u>	<u>18.53</u>	<u>2,669</u>	<u>20.05</u>

**16. Ֆինանսական գործիքներ**

**16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ**

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.4-ում:

**16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,150	-
Տրված փոխառություններ	650	1,640
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	12,705	8,089
	<u>14,505</u>	<u>9,729</u>

*Ֆինանսական պարտավորություններ*

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Փոխառություններ	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,314	814
	<u>2,314</u>	<u>814</u>

**17. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ**

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

**17.1 Ֆինանսական ռիսկի գործոններ**

*ա) Շուկայական ռիսկ*

Ընկերության գործունեությունն ենթարկվում է սոկոսադրոյքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

*բ) Արտարժույթային ռիսկ*

Ընկերությունը գործարքներ չի իրականացնում արտարժույթով և, հետևաբար, չի ենթարկվում արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

*գ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

*դ) Իրացվելիության ռիսկ*

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

**17.2 Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

**18. Կարևոր հաշվապահական գնահատումներ**

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, սովորաբար չեն համապատասխանում իրական արդյունքներին:

**19. Պարտավորվածություններ**

**19.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ**

*Ընկերությունը որպես վարձակալ*

Ընկերությունը վարձակալել է անորոշ ժամկետով գործառնական վարձակալությամբ 72.1 քառ.մ ընդհանուր մակերեսով տարածք բաժնետեր Անիկ Մարտիրոսյանից ամսական 222 հազար դրամ (տեղակայված ՀՀ, Երևան, Նալբանդյան փողոց, 50 շենք, 136 բնակարան):

**20. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

**20.1 Վերահսկողություն**

Ընկերությունը վերահսկվում է բաժնետերերի կողմից:

**Գործարքներ ղեկավարության հետ**

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	12,071	7,450